

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 81'373.421: 811'19=161.1=111

Հ.Ց. ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՀՈՄԱՆՇՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ԳԻՏԱՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Դիտարկվում են տերմինների անթույլատրելի հոմանշության դեպքերը գիտատեխնիկական բառարաններում: Դրանք հանդիպում են ոչ միան բառարաններում, այլև գիտական և ուսումնական գրականության մեջ՝ աղավաղելով գիտական խոսքը: Կատարվում են տերմինագործածության - տերմինակարգավորման առաջարկություններ:

Առանցքային բառեր. տերմինաբանություն, տերմինային բառարան, անթույլատրելի հոմանիշ-տերմիններ, տերմինագործածության կարգավորման անհրաժեշտություն:

Ներածություն: Տերմինաբանությունը մեկընդմիջտ տրված քարացած երևույթ է: Ընդհակառակը, զարգացման առումով լեզուներում այսօր առավել հարաշարժը բառապաշարի տերմինային մասնաշերտն է: Գիտության շարունակական զարգացման արդյունքում տերմինային բառապաշարն անընդհատ համալրվում է նորանոր տերմիններով, կամ ճշգրտվում են եղած հասկացությունները, և առաջ է գալիս նոր տերմիններ ստեղծելու, հին տերմինները վերանայելու անհրաժեշտություն (տերմինների զարգացում՝ պայմանավորված արտահամակարգային գործոններով): Եղած տերմինները կարող են վերանայվել նաև առանց իրենց հասկացությունների փոփոխության, եթե դրանք՝ իբրև բառային միավորներ, ի սկզբանե անհաջող են կառուցված եղել (տերմինների զարգացում՝ պայմանավորված ներհամակարգային գործոններով):

Տերմինների իմաստաբանական առանձնահատկություններով պայմանավորված՝ 1) նույն տերմինը կարող է տարբեր հասկացությունների նշանակությամբ հանդես գալ տարբեր բնագավառներում, 2) համանուն բառերը տերմինանալիս կարող են տարբեր հասկացությունների նշանակությամբ հանդես գալ տարբեր (երբեմն էլ նույն) բնագավառներում, 3) երկու և ավելի տերմիններ կարող են նշանակել մեկ հասկացություն նույն բնագավառում: Տերմինաբանության մեջ առաջին դեպքը տերմինային բազմիմաստությունն է, երկրորդը՝ տերմինային համանունությունը, երրորդը՝ տերմինային հոմանշությունը [1]:

Հոմանշությունը լեզվական միավորների ձևաիմաստային այն փոխհարաբերությունն է, երբ դրանք հնչյունական կազմով (գրությամբ) և արտասանությամբ տարբեր են, իմաստով մոտ, մերձավոր կամ նույնանիշ: Օրինակ՝ իմաս-

տով մոտ են, բայց բոլոր դեպքերում իրար փոխարինել չեն կարող *սյուք-հովիկ-զեփյուռ-քամի-հողմ-մրրիկ-փոթորիկ-սամում-պասսատ-մուսոն* օդերևութաբանական տերմինները: Նույնանիշ են *մազ-հեր-գես-վարս* բառերը, որոնք բառային մակարդակում կիրառվում են տարբեր ոճերում կամ նույն ոճում գործածվելիս պատկերավորման միջոց են դառնում: Հոմանշությունը լեզվի հարստության և ճոխության արտահայտությունն է, նաև ոճական պատկերավորման միջոց, լեզուն դարձնում է ճկուն՝ կանխելով անհարկի կրկնությունները:

Այլ է հոմանշությունը տերմինաբանության մեջ: Այստեղ նույնանշային շարքի անդամները կարող են դառնալ տարբեր բնագավառների տերմիններ (օրինակ՝ *պոչ-ազի-ձեփ-փուփ, ձի-նժույգ*. սրանցից առավել ընդհանուր իմաստ արտահայտող *պոչ, ձի* բառերը և՛ համագործածական շերտի բառեր են, և՛ տերմիններ. կենսաբանության բնագավառի հասկացություններ են նաև *ազին* (թավամազ պոչ) և *ձեփը* (ծարամազ պոչ), *փուփը* կամ *փոփունը* (իրանին ծուլված պոչ), որը նշանակում է նաև հանդերձի քղանցք [2]: Իսկ համագործածական շերտի *անցք-արանք-բացատ-բացվածք-խոռոչ-ծակ-ճեղք* հոմանիշները դարձել են նույն կամ տարբեր բնագավառների տերմիններ:

Տերմինների իմաստաբանությանը բնորոշ վերոհիշյալ դեպքերը տերմինաբանության մեջ միարժեքորեն չեն գնահատվում և քննվում են առանձին-առանձին: Տերմինագործածության մեջ անթույլատրելի են տերմինային հոմանշության դրսևորումները, և հատկապես այն դեպքը, երբ նույնանշային շարքի անդամները դառնում են նույն համակարգի տերմիններ: Դրանց քննությունը, ըստ այդմ՝ նաև տերմինակարգավորման հարցերը մշտապես արդիական են: Սույն աշխատանքում գիտատեխնիկական բնույթի բառարաններից քաղված օրինակներով վերլուծվում են տերմինային հոմանշության դրսևորումները:

Տերմինային հոմանշության դեպքերը գիտատեխնիկական բառարաններում: Տերմինահամակարգերում նույնանիշ տերմինների՝ որպես նույն հասկացությունների համար զուգահեռ նշանակությունների գործածությունը (տերմինային հոմանիշների առաջացումը), ինչպես ասվեց, պայմանավորված է արտալեզվական և ներլեզվական գործոններով, որոնք ուղղված են տերմինակարգավորման և տերմինագործածության օրինաչափությունների բացահայտմանն ու հաստատմանը [2]:

Տերմինաշինության օրինաչափությունների հաստատման, մասնավորապես՝ տերմինակերտման, տերմինային իմաստների ճշգրտման և տերմինագործածության հարցերի կարգավորման առումով բացառիկ է ճյուղային-մասնագիտական բառարանագրության նշանակությունը:

Հայ բառարանագրությունն ունի դարերի պատմություն, մինչդեռ բառա-

րանների տեսական հարցերի ուսումնասիրությամբ (բառարանագիտությամբ) սկսել են զբաղվել միայն անցյալ դարի կեսերից: Իսկ գիտատեխնիկական բնույթի բառարանների քննություն կատարվել է մասնակիորեն [1,2,3]: Այս իրավիճակով պայմանավորված՝ գիտատեխնիկական բառարանները շարունակում են ծանրաբեռնված մնալ անհարկի, չարդարացված հոմանիշներով: Իր ժամանակին խիստ արժեքավոր այնպիսի մի երևույթ, ինչպիսին «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան» է [9], նույնպես հեղեղված է հոմանիշ տերմիններով, հատկապես հայերեն-օտար կրկնակներով, որոնցից հաճախ նախապատվությունը տրված է օտար համարժեքին: Այս է պատճառը, որ մինչև այսօր էլ գիտատեխնիկական մասնագիտական և ուսումնական գրականության մեջ դժվարությամբ են արմատավորվում հայերեն համարժեքները: Այս բառարանում ներհամակարգային հոմանշությունը պարզ երևում է և՛ տերմինների ընդհանուր զննությամբ, և՛ հատկապես առանձին տերմինահամակարգերի քննությամբ: Մեկ առանձին՝ մեքենագիտական-մեքենաշինական տերմինահամակարգում հոմանշության դեպքերին աղբյուրաբան էնք մեր նախորդ աշխատանքներում [1,2]: Այստեղ վերոհիշյալ բառարանում առկա տարբեր համակարգերի տերմինների օրինակներով ցույց տանք հոմանշության դեպքերը, որոնք առաջ են եկել թարգմանության հետևանքով՝ հաշվի չառնելով տերմինաբանության անխախտելի պահանջը՝ մեկ հասկացությանը՝ մեկ տերմին տվյալ տերմինահամակարգում:

Բառարանում ներհամակարգային հոմանշությունը հանդես է գալիս որպես նույնանշություն և համանշություն:

1. Ներհամակարգային նույնանշությունը դրսևորվում է նույն տերմինի հայերեն-հայերեն և հայերեն-փոխառյալ կրկնակների տարատեսակներով:

- Տերմինների հայերեն-հայերեն կրկնակներ.

ա) գոյականի սեռական հոլովով և ածականական կրկնակներ. *ալմաստի //ալմաստե//ալմաստյա//ալմաստային, անդրադարձման//անդրադարձիչ, Արեգակի//արեգակնային, Արևի//արևային, արգելակի//արգելակային, հորատման//հորատային, ձգման//ձգիչ, օրվա//օրական* և այլն.

բ) ածականի՝ տարբեր ածանցներով կրկնակներ. *ազուցավոր//ազուցային, ազդրաթթվական//ազդրաթթվային, աղեղավոր//աղեղային, անցողիկ//անցումային, աստիճանավոր//աստիճանային, բաժանիչ//բաժանարար, կոնային//կոնական, սանրային//սանրավոր* և այլն.

գ) ածականի առանց ածանցի և ածանցավոր կամ այլ մասնիկներով կրկնակներ. *արագահան//արագահանելի, անթուրծ//չթրծած, անիզոպրոպ//անիզոպրոպային, անհալուն//չհալվող, գեղազարդ//գեղազարդային, համաժամ//համաժամանակյա, միանիշ//միանշան(ակ), սուր//սրած* և այլն.

դ) նույն արմատի՝ ածանցով կամ այլ արմատով համադրված կրկնակներ. ագուցաշար//ագուցապատ, ազդաշակ//ազդասարք, ալիքածն//ալիքային//ալիքավոր, այլումինազօծում//այլումինապատում, ածխածնահագեցում//ածխածնավորում//ածխածնացում, սկոսատաշվածք//սկոսատաշում, աղահամ//աղային, ամրակապ//ամրակապում//ամրակում//ամրապնդում, անխաղ//անխաղացք, անկյունարդ//անկյունաքանոն, անճշտություն//անճշտություն, անվանակարգություն//անվանացուցակ, աշխատաքանակ//աշխատատեղություն, ապրանքաման//ապրանքափաթեթ, ասֆալտաման//ասֆալտակերպ, արծաթազօծում//արծաթապատում, արտացայտում//արտացոլում, գերանաթողք/գերանասահք, թափարգել/թափամեղմիչ, ինքակաշում//ինքնահարակցում, նմանակություն//համանմանություն, օդագնացություն//օդանավարկություն և այլն:

- Տերմինների հայերեն-փոխառյալ (լիակատար և մասնակի) կրկնակներ. աստիճանացուցային//էքսպոնենտային, առանցքաչափ//աքսիոնոմետր, արսելերոմետր//արագացումաչափ, գլանատակառոց/ցիստոն, ինքնահսկիչ//ավտոտրոն, կլանում//արսորբում, կուրակիչ//ակումուլյատոր, հարակցում//ադիերգիա, հարմարում//հարմարվողություն//ադապտացիա, հարստացում//ֆլուտացում, ծայնարկիչ//ադապտեր, միացք//ագրեգատ, նմանակ//անալոգ, տարածն// ալոտրոպ, փոխադրական//տրանսպորտային և այլն:

2. Ներհամակարգային համանշտությունը նույն իմաստի արտահայտումն է տարբեր տերմիններով. անվամեջ//սոնիամեջ, անընդմեջ//անխզովի, բեկունություն//փխրունություն, գջիր//շաղափ, գայլիկոն//շաղափ, գլանիկ//հոլանիկ, զարկում//բարբախում, ընթացիկ//երթային, թագանիվ//պսակ, թագ/պսակ//օղագոտի/շրջանակ, թև// ճյուղ, կտավ//քաթան, կտրիչ//թուր, հարթիչ//կոկիչ, հարված//զարկ, հատված//բեկոր, հեսան//սրոցաքար, ճոճան//հավասարակշռիչ լծակ, մեխում//զամում, ներճնշում//ներճմլում, ներմաքրիչ//փարտիչ, սյունակալ//ցցակալ, տարվող//բանեցվող, փոխազդեցություն//փոխներգործություն// փոխգործողություն և այլն:

Այս բոլոր դեպքերում առաջ են գալիս հոմանիշ տերմիններ, որոնք զուգահեռաբար կարող են գործառվել մի տևական ժամանակամիջոցում՝ հիմք հանդիսանալով տերմինային հոմանշության: Առանձնապես անհանձնարարելի են ներհամակարգային ավելորդ զուգաձևությունները: Այսինքն՝ այն, ինչ բառապաշարի դեպքում համարվում է լեզվի հարստության և ճոխության արտահայտություն (հոմանշություն, բազմիմաստություն), տերմինաբանության մեջ դիտվում է անհանձնարարելի, մինչև իսկ անթույլատրելի, քանի որ մեկ հասկացությունը՝ որպես գիտականորեն սահմանված իմաստ, պետք է արտահայտվի մեկ հաստատապես ընդունված (կանոնակարգված-նորմավորված) տերմինով:

Տերմին-հոմանիշների գործածության պատճառներ կարող են լինել. 1. գիտական հասկացությունների ճշգրտման հետևանքով առաջացող զուգահեռ ձևերի առկայությունը, 2. տերմինակարգավորող մարմինների (Լեզվի պետական կոմիտե, Լեզվի տեսչություն) կողմից զուգաձև տերմիններից հանձնարարվող տարբերակի զանցառումը, 3. փոխառյալ տերմինի՝ սեփական անհաջող միավորով փոխարինումը կամ թարգմանումը, ինչն ի վերջո պայմանավորում է վերադարձը փոխառությանը, 4. անհատական ճաշակը փոխառություններին տուրք տալու հարցում հատկապես բանավոր գիտական խոսքում, որը վերածվում է ավանդույթի և ազդում նաև գրավոր խոսքի վրա, 5. ավանդույթին տուրք տալու դրսևորում է նաև այն, որ տասնամյակներ շարունակ մասնագիտական բառարանից բառարան փոխանցվում են հոմանիշ տերմինները, այսինքն նոր բառարանները ստեղծվում են՝ կրկնելով հների իրողությունները:

Վերջին իրողությունը, որ երևում է ստորև ներկայացված աղյուսակից, վկայում է այն մասին, որ եթե առաջնահերթ բառարաններում դեռևս ըստ ամենայնի չյուրացված հասկացությունները կարող էին տերմին-հոմանիշների առաջացման պատճառ դառնալ, ապա հաջորդող բառարաններում հեղինակները հաշվի չեն առել տերմինագործածության պահանջները՝ տերմին հոմանիշներից ըստ պահանջի վերջնական ընտրությունը թողնելով օգտագործողի կամքին կամ նախասիրությանը: Նման մոտեցումը բնորոշ է հանրագիտական բառարանների կառուցվածքին և միանգամայն հակասում է տերմինաբանական բառարանների կառուցման սկզբունքներին, հետևապես՝ նաև տերմինակարգավորման և տերմինների նորմավորման պահանջներին: Տերմինաբանական բառարանում նույն բնագավառի մեկ հասկացությունը պետք է նշվի կամ թարգմանվի մեկ միանշանակ տերմինով:

Հարկ է նշել՝ որոնք էլ լինեն հոմանիշ տերմինների գործածության պատճառները, միևնույնն է, ժամանակի ընթացքում դրանց միջև մղվող պայքարն ի վերջո ավարտվում է համակարգում մեկի կայունացմամբ:

Տերմին-հոմանիշների անվայությունը տարբեր տարիների բառարաններում

Տերմինը	деталь	деформация	конструкция	корпус	контакт
Բառարանը					
Անարդյան Հ. և ուրիշ. [4]	մանրամասներ (детали)	ձևափոխություն	կառուցվածք	—	—
Անտոնյան Գ. [5]					
• 1945թ.	դետալ/մասնիկ	ձևափոխություն// դեֆորմացիա	կառուցվածք// կոնստրուկցիա	իրան	կոնտակտ//շոշափ
• 1973թ.	դետալ/մաս	ձևափոխություն// դեֆորմացիա	կառուցվածք// կոնստրուկցիա	իրան/կորպուս	կոնտակտ/հպիչ, 2. հարմ
Ալիշարամով Ա. և ուրիշ. [6]	դետալ/մաս/մանրամաս	ձևափոխություն// դեֆորմացիա	կառուցվածք	կորպուս	1. կոնտակտ(կ), 2. հարմ//շոշափ
Մեջրյան Կ. [7]					
• 1960թ.	դետալ	դեֆորմացիա	կոնստրուկցիա	—	կոնտակտ
• 1978թ.	դետալ	դեֆորմացիա	կոնստրուկցիա	կորպուս	կոնտակտ
Մարգարյան Յու., Հովուսյան Ն. [8]					
• 1984թ.	դետալ/մաս	դեֆորմացիա	կառուցվածք/կոնստրուկցիա	—	հարմ
• 2009թ.	—	դեֆորմացիա	կառուցվածք	իրան	հարմ
Հացադարձյան Զ. և ուրիշ. [9]	մանրամաս/մաս// մանրակ/դետալ	դեֆորմացիա/ձևափոխություն/ձևափոխում	կառուցվածք/կոնստրուկցիա, 2. կառուցատարր// կոնստրուկցիա	1. հետևանք // պատյան//իրան// կորպուս, 2. մանրաշենք, 3. կորպուս (տպգ.)	հպակ/հարմ// հպատեղ
Կարապետյան Ս. [10]	դետալ	ձևափոխում	կոնստրուկցիա	մասնաշենք	—
Մարդյան Վ. և ուրիշ. [11]	—	—	կառուցվածք (конструкция) նաև (сооружение)	կորպուս	հարմ

Աղյուսակի շարունակությունը

Տերմինը Բառարանը	կոնցր	масса	арматура	симметрия	сварка
Աճառյան Հ. և ուրիշ. [4]	Եզրագլիծ	մաստա/զանգված	ամրան	համաչափություն	եր
Անտոնյան Գ. [5] • 1945թ. • 1973թ.	կոնտուր/Եզրագլիծ կոնտուր/Եզրագլիծ	մաստա/զանգված մաստա/զանգված	արմատուրա// հաներթվանք ամրան// արմատուրա	- համաչափություն// սիմետրիկություն	Էռակցում// Էռացում զորում
Ախչարումով Ռ. և ուրիշ. [6]	1. կոնտուր, 2. Եզրագլիծ//ուրվագլիծ	1. զանգված, 2. մաստա (միս.)	1. ամրան, 2. արմատուրա	սիմետրիկություն// համաչափություն	1. եռք. 2. Էռակ
Մնջոյան Կ. [7] • 1960թ. • 1978թ.	- ուրվագլիծ	մաստա մաստա	- -	սիմետրիկություն սիմետրիկություն	- Էռքակցում
Մարգարյան Յու., Հովհանյան Ն. [8] • 1984թ. • 2009թ.	Եզրագլիծ (կոնտուր) կոնտուր (Եզրագլիծ)	մաստա զանգված	- -	- -	- -
Հացագործյան Զ. և ուրիշ. [9]	1. ուրվագլիծ/Եզրագլիծ, 2. սարքաշղթա, 3. հաղորդաշղթա/կոնտուր	1. զանգված, 2. խյուս//խառնուրդ //շաղախ/զանգված	1. ամրան, 2. արմատուր	համաչափություն// սիմետրիկություն	Էռակցում
Կարապետյան Ս. [10]	ուրվագլիծ	զանգված	ամրան	-	զորում
Մարտյան Վ. և ուրիշ. [11]	Եզրագլիծ	զանգված	արմատուր	-	-

Աղյուսակի շարունակությունը

Տերմինը	кабель	привод	элемент	описание	инкл
Բառարանը Աճառյան Հ. և ուրիշ. [4]	մալուխ	բանեցում	էլեմենտ/տարր	հարակցություն	–
Անտոնյան Պ. [5] • 1945թ. • 1973թ.	կարել/մալուխ կարել/մալուխ	հարորդակ/բանարկ հարորդակ/շարժարներ	էլեմենտ/տարր էլեմենտ/տարր	կցորդում 1. կցորդում/շաղկապում, 2. կցորդիչ	ցիկլ//շրջան/բորբա- պտույտ ցիկլ
Ալեշարումով Ը. և ուրիշ. [6]	կարել/մալուխ	շարժարներ/հարորդակ	տարր	1. կցորդում, 2. հարակցում// շաղկապում, 3. կցորդիչ, 4. հարակցություն, 5. կցում	ցիկլ
Մեջդյան Կ. [7] • 1960թ. • 1978թ.	– –	– շարժարներ	տարր (էլեմենտ) տարր	– համակցում	– ցիկլ
Մարգարյան Յու., Հովուսյան Ն. [8] • 1984թ. • 2009թ.	– –	շարժարներ շարժարներ (ավտուատոր)	տարր տարր	– կցորդիչ (սպին)	– ցիկլ
Հասցազորժյան Ջ. և ուրիշ. [9]	կարել/մալուխ	շարժարներ/հարորդակ	տարր	1. շաղկապում, 2. կցորդում //շղթայակցում, 3. կցորդիչ	ցիկլ//բորբաշրջան// պարբերություն
Կարապետյան Ս. [10]	–	–	տարր	միակցություն	ցիկլ
Մարթյան Վ. և ուրիշ. [11]	կարել	–	տարր	–	ցիկլ

Սակայն այնքան ժամանակ, քանի դեռ դրանք զուգահեռաբար գոյատևում են, առկա է թյուրիմացության, շփոթության վտանգը: Մանավանդ որ այսօր էլ դեռ հանդիպում են բառարաններ [12], որոնք, չնայած իրենց «տերմինաբանական» անվանումներին, ավելի հաճախ տերմինների այբբենական երկլեզվյան, եռլեզվյան ցանկեր են, որոնք չեն նպաստում տվյալ բնագավառի տերմինաբանության կարգավորմանը, ոչ էլ ուսուցողական արժեք ունեն, կամ, լավագույն դեպքում, «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանի» կրկնությունն են մեկերկու առանձին համակարգերի ընդգրկման առումով:

Ցանկացած բնույթի (բանասիրական թե մասնագիտական-տերմինաբանական) բառարանի արժեքը, վերջին հաշվով, տվյալ լեզվի (լեզուների) բառապաշարի կամ նրա մի մասնաշերտի ճշգրիտ և նորմավորված արտացոլումը և ըստ տվյալ բառարանի նպատակադրումից բխող որոշակի խնդիրների լուծումն է: Հետևապես, մասնագիտական-տերմինաբանական բառարանի առաջնահերթ խնդիրը նրանում ներառված տերմինահամակարգերի սահմանների և տերմինների ճշգրիտ, կանոնակարգված, նորմավորված-միօրինակացված ներկայացումն է, որ ենթադրում է, նախ և առաջ, բառարանում ներառված տերմինահամակարգ(եր)ի իմաստաբանական իրողությունների արտացոլում, ինչը հաճախ հաշվի չի առնվում մասնագիտական բառարանների կազմության ժամանակ: Տերմինների իմաստաբանական-համակարգային իրողությունների արտացոլումը բառարանագրության մեջ այլ քննության առարկա է, որին կանդրադառնանանք առաջիկա ուսումնասիրություններից մեկում:

Եզրակացություն: Տերմինաբանության զարգացման, տերմինագործածության և տերմինակարգավորման շահերը պահանջում են բառարաններ կազմելիս նկատի ունենալ հետևյալ իրողությունները.

1. Տերմինաբանական անկարգապահության դեպքեր պետք է համարել բառարաններում հանդիպող հետևյալ թերությունները, երբ՝

ա) դրանք ծանրաբեռնված են անհարկի, չարդարացված հոմանիշներով,

բ) դրանցում ընտրություն չի կատարված հոգուտ հայերեն արդեն գործածության մեջ գտնվող տարբերակի, և զուգահեռ տրված է նաև օտար համարժեքը:

2. Տերմինակարգավորման առումով առանձնապես արժեքավոր են բնային սկզբունքով կառուցված բառարանները: Վաղուց ժամանակավրեպ է տերմինների՝ զուտ այբբենական ցանկի (թեկուզև բազմալեզվյան) տեսքով թվարկումը: Նման բառարաններն այսօր ո՛չ տերմինակարգավորվող և ո՛չ էլ ուսումնական արժեք ունեն:

3. Բառարանում համապատասխան նշումներով սահմանագծված պետք է լինեն ներառված տերմինահամակարգ(եր)ի և հարակից տերմինների տիրույթ(ներ)ը:

4. Նեղ մասնագիտական բառարաններ կառուցելիս անհրաժեշտ է միավորել լեզվաբան և մյուս մասնագետների ջանքերը, ինչը կապահովի՝

ա) բառարանի գիտականությունը՝ ըստ տվյալ բնագավառի տերմինաբանության իրողությունների,

բ) տերմինների լեզվական օրինաչափությունների պահպանումը՝ ըստ տերմին-համարժեքների՝ բառային իմաստներից բխող ընտրությամբ կամ լեզվական համապատասխան կառուցվածքով տերմինի ստեղծմամբ:

Միայն այս ճանապարհով հնարավոր կլինի պահպանել տերմինագիտության անխախտելի պահանջը. *մեկ նորմավորված տերմին՝ մեկ հասկացությանը*:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Պետրոսյան Հ.Ց.**, Հայերեն մեքենագիտական և մեքենաշինական տերմինների իմաստարանական-կառուցվածքային և գործառական վերլուծություն /Թեկն. ատեն, Ե., 2007, 157 էջ:
2. **Պետրոսյան Հ.Ց.**, Տերմինագիտության հիմունքներ. Դասագիրք, Ե., 2010, 303 էջ:
3. **Պետրոսյան Հ.Ց.**, Հայերեն գիտատեխնիկական տերմինների բառարանագրման հարցի շուրջ/ Հայ բառարանագրության արդի խնդիրներն ու հեռանկարը. Միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2021, Պրակ Բ, էջ 138-150:
4. **Աճառյան Հ. և ուրիշ.**, Ռուս-հայերեն բառարան շինարարական կառուցվածքների, Ե., 1928, 302 էջ:
5. **Անտոնյան Գ.**, Ռուս-հայերեն ավտո-տրակտորային տերմինաբանական բառարան, Ե., 1945, 217 էջ: Ռուս-հայերեն ավտոմոբիլային բառարան, Ե., 1973, 305 էջ:
6. **Ախշարումով Ռ. և ուրիշ.**, Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան, Ե., 1957, 436 էջ:
7. **Մնջոյան Կ.**, Մեխանիկի համառոտ տեղեկագիրք, 1-ին մաս, Ե., 1960, 225 էջ : 2-րդ մաս, Ե., 1978, 307 էջ:
8. **Սարգսյան Յու.Լ., Հովումյան Ն.Գ.**, Մեխանիզմների և մեքենաների տեսության տերմինարան, Ե., 1984, 43 էջ: **Սարգսյան Յու.Լ. և ուրիշ.**, Մեխանիզմների և մեքենաների տեսություն. անգլերեն-հայերեն-ռուսերեն տերմինարան, Ե., 2009, 390 էջ:
9. **Չ. Հացագործյան Չ. և ուրիշ.**, Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան, Ե., 1988, 672 էջ:
10. **Կարապետյան Ս.**, Ռուս-հայերեն-անգլերեն ճարտարապետական-շինարարական տերմինների բառարան, Ե., 1991, 111 էջ:
11. **Մադոյան Վ. և ուրիշ.**, Հիդրավլիկական տերմինների անգլերեն-ռուսերեն-հայերեն բառարան, Ե., 2014, 454 էջ:
12. **Թեքնեջյան Մ.**, Հայերեն-անգլերեն պոլիտեխնիկական համառոտ բառարան, Ե., 2003: **Կոտիկյան Ս.Յու. և ուրիշ.**, Անգլերեն-ռուսերեն-հայերեն քիմիատեխնոլոգիական բառարան, Ե., 2005: **Аганян Г.З., Байбуртян М.В.**, Русско-армянский учебный словарь энергетических и электротехнических терминов, Е., 2008. **Мартirosян С.С.**, Русско-армянский учебный словарь, Е., 2010. **Титанян Н.А.**, Краткий русско-армянский, армяно-русский авиационный словарь, Е., 2010 և այլն:

Ա.Շ. ПЕТРОСЯН

ПРОЯВЛЕНИЕ СИНОНИМИИ ТЕРМИНОВ В НАУЧНО-ТЕХНИЧЕСКОЙ ЛЕКСИКОГРАФИИ

Рассматриваются случаи недопустимой синонимии терминов в научно-технических словарях. Синонимия встречается не только в словарях, но и в научной и учебной литературе, искажая научное слово. Даются рекомендации по упорядочиванию употребления терминов.

Ключевые слова: терминология, словарь терминов, недопустимые синонимы-термины, необходимость упорядочивания употребления терминов.

H.ՏՏ. PETROSYAN

MANIFESTATIONS OF THE TERM SYNONYMY IN THE SCIENTIFIC AND TECHNICAL LEXIOGRAPHY

The cases of inadmissible synonymy of terms in scientific and technical dictionaries are considered. They can be found not only in dictionaries, but also in scientific and academic literature, distorting the scientific speech. Proposals to regulate the use of terms are made.

Keywords: terminology, dictionary of terms, inadmissible synonymic terms, need of regulating the use of terms.

ՀՏԴ 81(0.032) (479.25)

Վ.Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՂԱՉԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ ԵՐԿԵՐԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԼԵՋՎԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Ներկայացվել են Ղաչար Փարպեցու «Պատմության» և «Թղթի» մինչ օրս հայտնի ձեռագրերի, այդ թվում՝ և պատահիկների վերաբերյալ տեղեկություններ, անդրադարձ է կատարվել դրանցում առկա լեզվական տարբերություններին: Փորձ է արվել՝ պարզելու, թե որ իրողություններն են նախնական, որոնք են ընդօրինակողների նորամուծությունների և միջամտությունների արգասիք: Որոշ դիտարկումներ են արվել նաև քննական բնագիրը կազմողների սրբագրությունների վերաբերյալ, կատարվել են ճշգրտումներ:

Առանցքային բառեր. երկ, ձեռագիր, պատահիկ, ընդօրինակություն (գրչագրություն), քննական (գիտական) բնագիր, բառատարբերակ, բառաձև:

Ներածություն: Ղաչար Փարպեցու «Պատմության» և «Թղթի» քննական բնագիրը կազմել են Գ. Տեր-Մկրտչյանը և Ստ. Մալխասյանցը՝ որպես հիմք ունենալով հրապարակում եղած ձեռագրերը և մինչ այդ իրականացված տպա-